ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

«05» դեկտեմբերի 2024թ. No 11/1-Գ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«Շին Քոնստրուկտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ

Գնման ընթացակարգի ծածկագիր՝ **ՀՀՊԵԿ-ԳՀԽԾՁԲ-24/13**

Մասնակից՝ **«Շին Քոնստրուկտ» ՍՊԸ**
/ՀՎՀՀ՝ 05560589, գործունեության հասցե՝ ք. Գյումրի, Սարուխանյան 29տ/

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար Երևան քաղաքի Սասունցի Դավթի թիվ 87Ա հասցեում գտնվող ՀՀ ՊԵԿ վարչական շենքում վերանորոգման աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով 06.11.2024թ. հայտարարվել է ՀՀՊԵԿ-ԳՀԽԾՁԲ-24/13 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը, որին հայտ է ներկայացրել «Շին Քոնստրուկտ» ՍՊԸ-ն: Գնահատող հանձնաժողովը 18.11.2024թ.-ին կայացած նիստում արձանագրել է, որ «Շին Քոնստրուկտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը լրացված են հրավերի պահանջներին ոչ համապատասխան՝ առկա չէ պահանջվող լիցենզիայի ներդիրներից 05 և 06 ներդիրները:

18.11.2024թ. թիվ 1/18-4/73535-2024 գրությամբ հարցում է կատարվել ՀՀ քաղաքաշինության կոմիտե հրավերով պահանջվող շինարարության որակի տեխնիկական հսկողության գործունեության իրականացման առնվազն 2-րդ դասի լիցենզիայի և նրան կից տրամադրվող ներդիրների մասին տեղեկատվություն ստանալու նպատակով: 20.11.2024թ. թիվ 03/22/18242-2024 գրությամբ պարզվել է, որ «Շին Քոնստրուկտ» ՍՊԸ-ն չունի 05 և 06

ներդիրները, որի հիման վրա գնահատող հանձնաժողովի 25.11.2024թ. թիվ 5 որոշմամբ կազմակերպության կողմից ներկայացված հայտը համարվել է հրավերի պահանջներին ոչ համապատասխան և հիմք ընդունելով ՀՀ կառավարության N 526-Ն որոշման 42-րդ կետը հանձնաժողովը մերժել է «Շին Քոնստրուկտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:

1. Եզրահանգում

Վերոնշյալ կարգավորումների համատեքստում անդրադառնալով առկա փաստական հանգամանքներին՝ պետք է արձանագրել, որ ի հակադրություն հրավերի պահանջներին՝ որպես գնման գործընթացի մասնակից հանդես եկած «Շին Քոնստրուկտ» ՍՊԸ-ն՝ չներկայացնելով հրավերով սահմանված փաստաթղթերը, խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին «Շին Քոնստրուկտ» ՍՊԸ-ի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, այն է՝ Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա, որոշում եմ **«Շին Քոնստրուկտ» ՍՊԸ-ին** ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

12/5/2024

X

ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Signed by: GEVORGYAN EDGAR 4010690054 ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ